https://doi.org/10.46991/S&L/2022.93.104

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Մարտին Խաչիկյան
«Բի էլ Սի» ՍՊԸ իրավաբան

Կորպորատիվ կառավարման գաղափարը գիտական ուսումնասիրությունների կիզակետում է հայտնվել ամբողջ աշխարհում կորպորացիաների բազմաթիվ ճգնաժամերի արդյունքում, որոնց պատճառը եղել է հսկողության և ուղղորդման մեխանիզմների բացակայությունը[1]: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ իրավաբանական անձի կառավարման անհրաժեշտությունը պայմանավորված է այն բանով, որ կազմակերպություններում աշխատող անհատները հետապնդում են իրենց սեփական շահերը և փորձում իրենց գործունեությունն իրականացնել այնպես, որ այդ շահերը գերակա լինեն կազմակերպության՝ որպես իրավաբանական անձի շահերի նկատմամբ, և հենց այդ ձգտումը զսպումների և հակակշիռների կիրառման միջոցով կանխելու, ինչպես նաև կազմակերպության աշխատողների համար կազմակերպության շահերով առաջնորդվելը խթանելու նպատակով էլ ստեղծվում է կառավարման համակարգը, որը կախված է նաև տվյալ կազմակերպության աշխատողների անձնական հատկանիշներից[2]:

Իրավագետ գիտնականները իրենց աշխատություններում նույնպես անդրադարձել են «կորպորատիվ կառավարում» հասկացությանը, և առկա են բազմաթիվ սահմանումներ: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձնահատկություններին անդրադարձել է հատկապես պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյանը, որը, ի թիվս այլ հարցերի, ներկայացրել է նաև կորպորատիվ կառավարման ընդհանուր բնութագիրը և կառավարման մարմիններ հասկացությունը: Կորպորատիվ կառավարման համընդհանուր սահմանում գոյություն չունի[3]: Օրինակ՝ Ն.Ն. Պախամովան, քննելով կորպորատիվ կառավարումը գործառնական տեսանկյունից, այն համարում է կորպորատիվ սեփականության հարաբերությունների իրականացման ձև[4]: Վ. Վ. Դոլինսկայան կորպորատիվ կառավարման ներքո հասկանում է իրավանորմերով կարգավորվող կազմակերպական և գույքային հարաբերությունների համակարգ, որոնց օգնությամբ կորպորացիան իրականացնում, ներկայացնում և պաշտպանում է ներդրողների շահերը[5]: Սրանցից բացի՝ կան կորպորատիվ կառավարումը բնութագրող մի շարք

[1] Helene Eller Corporate Governance in Non-profit Organizations in Europe by Focusing the Governance Model, Austrian Alpine Club 2014.http://c.ymcdn.com/sites/www.istr.org/resource/resmgr/WP2014/Eller_CorporateGovernance_Co.pdf հասանելի է 05.09.2022 թ. դրությամբ:

[2] Տե՛ս **David F. Larcker,** Corporate Governance According to Charles T. Munger. Stanford Closer Look Series 2014, https://www.gsb.stanford.edu/sites/gsb/files/publication-pdf/cgri-closer-look-38-corp-gov-munger.pdf հասանել է 15.09.2022 թ. դրությամբ:

[3] Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), դոկտորական ատենախոսություն. ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2013, էջ 270:

[4] Տե՛ս **Пахамова Н. Н.** Основы теории корпоративных отношений (правовой аспект)., Екатеринбург, 2004, էջ 420-421:

[5] Տե՛ս **Долинская В.В.** Акционерное право: основные положения и тенденции. Москва, 2006, էջ 420-421:

այլ սահմանումներ, որոնցից ամենապարզն ու դիպուկը տրված է Միացյալ Թագավորության Քեդբըրիի կանոնագրքում, համաձայն որի՝ «Կորպորատիվ կառավարումը համակարգ է, որով ընկերությունները ղեկավարվում և վերահսկվում են»[1]:

Կորպորատիվ կառավարումն ունի հիերարխիկ բարդ կառուցվածք:

Կորպորացիան գլխավորում են ղեկավար մարմինները, իսկ խոշոր կորպորացիաներում դրանք սովորաբար լինում են մեկից ավելի[2]: Առկա են կորպորատիվ կառավարման տարբեր մոդելներ՝ իրենց բնորոշ կառուցվածքային առանձնահատկություններով:

Անգլալեզու գիտական գրականության մեջ կորպորատիվ կառավարում տերմինն սկսել է գործածվել 1990 թվականից[3]: Առևտրային իրավաբանական անձանց կորպորատիվ կառավամարման հիմնական խնդիրները գործադիր մարմնի, խորհրդի և բաժնետերերի միջև իշխանության և դերերի բաշխում իրականացնելն է, ինչպես նաև վերջիններիս պատասխանատվության հարցը կարգավորելը[4], որոնք կատարվում են իրավաբանական անձի երկարաժամկետ կայուն զարգացումն ապահովելու նպատակով:

Առկա են կորպորատիվ կառավարման մոդելների դասակարգման տարբեր մոտեցումներ:

Կորպորատիվ կառավարման հետազոտողները ամենից առաջ առանձնացնում են բաժնետիրական հարաբերությունների հետևյալ մոդելները՝ անգլո-ամերիկյան, գերմանական, ճապոնական:

Ըստ կորպորացիայի հիմնական կառավարումը իրականացնող մարմնի՝ լինում են՝ շահագրգիռ անձանց մոդել (stakeholders model), աշխատակիցների բաժնետիրացման մոդել, տնօրենների խորհրդի առաջնայնության մոդելը ու բաժնետերերի գերակայության մոդել (shareholders primacy)[5]:

Ըստ կորպորատիվ կառավարման մեթոդների՝ լինում են՝ առթսայդերական, ինսայդերական:

ՀՀ օրենսդրությամբ բաժնետիրական ընկերությունների համար թույլատրվում է ինչպես երկաստիճան, այնպես էլ եռաստիճան կառավարման մոդելի ընտրությունը, սակայն առկա է բացառություն. մասնավորապես՝ բանկերի դեպքում կառավարման մարմինների կառուցվածքը պետք է ունենա եռաստիճան համակարգ:

---

[1] Տե՛ս **Ավետիսյան Վ.Դ.,** նշվ. աշխ, էջ 270:

[2] Սթիվեն Բեյնբրիջը իր աշխատություններից մեկում կորպորացիայի արդյունավետ աշխատանքը համեմատել է փղի հետ: Այդ համեմատությունը նա անվանել է փղի մասին առակ. ըստ այդ առակի՝ փղերն ունեն պոչ, ականջներ և ոտքեր, իսկ կորպորացիաներն ունեն բաժնետերեր, ղեկավարներ և աշխատակիցներ, շահագրգիռ կողմեր և տնօրեններ: Որպեսզի քայլեցնեն փղին, իսկ այս դեպքում՝ արդյունավետորեն աշխատեցնել կորպորացիան, պահանջվում է այս բոլոր մասերի միասնական աշխատանք: (Տե՛ս՝ **Ronald J. Gilson**, “Value Creation by Business Lawyers: Legal Skills and Asset Pricing”, 93 Yale L. J. էջ 239, 1984):

[3] Տե՛ս **Witt P.** Corporate Governance-Systeme im Wettbewerb, Neue betriebswirtschaftliche Forschung, Vol. 309, 1st ed., Dt. Univ.-Verl., Wiesbaden Deutscher Universitätsverlag, Auflage, 2003, էջ 41:

[4] Տե՛ս **Ryan, L.V., Buchholtz, A.K. and Kolb, R.W.** New directions in corporate governance and finance: Implications for business ethics research, Business Ethics Quarterly, Vol. 20 No. 4. Cambridge University Press 2010, էջ 673:

[5] Տե՛ս՝ Edited by Jeffrey N. Gordon and Wolf-Georg Ringe, ”The Oxford Handbook of Corporate Law and Governance”, Նյու Յորք, 2018, էջ 24.

Ի տարբերություն կառավարման երկաստիճան համակարգի՝ եռաստիճանի դեպքում դիտորդ խորհրդի առկայությունը թույլ է տալիս կորպորատիվ կառավարման հիմնական ուղղվածությունը բաժնետերերից շեղել և ընդգրկել առավել լայն թվով շահառուների՝ ներառյալ կազմակերպության աշխատակիցներին[1]: Այս կառավարման մոդելը հանդիպում է Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Նիդերլանդներում և Արևելյան Եվրոպայի որոշ պետություններում[2]:

Անկախ այն բանից, թե կազմակերպաիրավական որ ձևն է քննարկվում, կարող ենք վստահությամբ արձանագրել, որ կորպորատիվ կառավարման բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է, ի տարբերություն, օրնակ՝ հասարակական կազմակերպությունների, որոնցում բարձրագույն մարմինն ունի ժողով, համաժողով, վեհաժողով, համագումար, հոգաբարձուների խորհուրդ կամ այլ անվանում[3]:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ բաժնետիրական ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է հետևյալը.

«1) Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

(…)»:

Ընդհանուր ժողովը ընկերության բաժնետերերի կողմից անուղղակի կառավարման միջոց է, որոնք իրենց տրամադրության տակ ունեն ուղղակի քվեարկության իրավունքով բաժնետոմսեր: Որոշ հեղինակներ, օրինակ՝ Ա.Ա. Մակովսկայան, հակված են նման անուղղակի կառավարումը համարել բաժնետիրոջ կողմից «սեփականության վերահսկման» հնարավորություն[4]:

Բաժնետերերը կառավարման իրենց իրավունքները իրացնում են ընդհանուր ժողովին մասնակցելու և քվեարկելու միջոցով:

Օրենքի 12-րդ հոդվածը մինչև բաժնետիրական ընկերության ստեղծումը կարգավորում է ապագա ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովի գումարման և անցկացման հետ կապված հարաբերությունները, իսկ 66-րդ հոդվածի 1-ին կետը, ժողովների գումարման պարբերականությունից ելնելով, տարանջատում է արդեն իսկ ստեղծված ընկերության ընդհանուր ժողովի երկու տեսակ՝ բաժնետերերի տարեկան և բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով[5]:

---

[1] Տե՛ս **Witt P.** Corporate Governance-Systeme im Wettbewerb, Neue betriebswirtschaftliche Forschung, Vol. 309, 1st ed., Dt. Univ.-Verl., Wiesbaden Deutscher Universitätsverlag, Auflage 2003 էջ 79

[2] Տե՛ս **Büchele, M., Mildner, T., Murschitz, K., Roth, G.H. and Wörle, U.,** G.H.B.M. Corporate Governance: Gesetz und Selbstverpflichtung, Corporate Governance in Deutschland und Österreich, Lit, Wien, Münster 2006, էջ 35

[3] Տե՛ս «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մաս:

[4] Տե՛ս **Маковская А.А.** Правовые последствия недействительности решений общего собрания акционеров и совета директоров акционерного общества /В сборнике: Недействительность в гражданском праве: проблемы, тенденции, практика. М., 2016. – էջ 357.

[5] Տե՛ս **Ավետիսյան Վ.** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), դոկտորական ատենախոսություն. ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2013, էջ 298:

Ի տարբերություն բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովների՝ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի անցկացումը պարտադիր է: Այսպես, Օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ պարբերությամբ սահմանվում է հետևյալը. «…Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո:

Տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում»:

Ֆինանսական տարի հասկացությունը ՀՀ-ում սկսվում է օրացույցային տարվա հետ՝ հունվարի 1-ին, և ավարտվում է դեկտեմբերի 31-ին: Որոշ ընկերություններ, ինչպիսիք են Cisco Systems-ը[1], իրենց ֆինանսական տարին ավարտում են ամեն տարի՝ շաբաթվա նույն օրը (օրինակ՝ ուրբաթ օրը՝ դեկտեմբերի 31-ին ամենամոտը):

ՌԴ-ում բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովն անցկացվում է հաշվետու տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու և ոչ ուշ, քան վեց ամիս հետո, եթե ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետում դրա անցկացման ժամանակաշրջանի համար այլ պահանջներ սահմանված չեն[2]:

ՀՀ օրենսդրությամբ պարտադիր պահանջ է սահմանել. ամենամյա ընդհանուր ժողովը պետք է կայացվի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, սակայն միևնույն ժամանակ ճկուն հնարավորություն է տրվել ընկերություններին կանոնադրությամբ նախատեսել ավելի կարճ ժամանակատված՝ ֆինանսական տարվա ավարտից հետո[3]:

Տարեկան ժողովից բացի՝ ընթացիկ ժողովները համարվում են արտահերթ: Դրանք գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:[4]

Օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն. «Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի առնվազն 10 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: (…)»:

Օրենդիրը նաև սահմանել է դեպքեր, երբ արտահերթ ժողովի հրավիրման պահանջը ներկայացվում է ոչ թե նման կամքի դրսևորման պարագայում, այլ Օ-

---

[1] Տե՛ս «Նյու Յորք Թայմզ» պարբերականի էլեկտրոնային կայքը. https://www.nytimes.com/2004/05/12/business/cisco-profit-for-quarter-slightly-beats-estimates.html հասանելի է 07.08.2022 թվականի դրությամբ:

[2] Տե՛ս Федеральный закон от 26.12.1995 N 208-ФЗ (ред. от 14.07.2022) "Об акционерных обществах", Статья 47.

[3] Օրինակ՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ սահմանվում է՝ «…Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 3 ամսվա ընթացքում…», «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ սահմանվում է՝ «… ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 4 ամսվա ընթացքում…»:

[4] Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մաս 4-րդ պարբերությունը:

րենքով հստակ սահմանված դեպքերում, մասնավորապես՝ երբ խորհուրդը կամ գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր են նման պահանջ ներկայացնել կամ հրավիրել արտահերթ ժողով[1]:

Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝

«1) Ժողովի իրավասություններն են՝

(…)

13) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի»:

Վերոգրյալից բխում է, որ տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում գլխավոր հարցերից են՝ ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, իսկ ժողովի չկայացման դեպքում՝ արտահերթ ժողովը առաջնահերթ պետք է հրավիրվի վերոնշյալ հարցերի քննարկման նպատակով, այնուհետև քննարկման առարկա կարող են դարձվել ընկերության կառավարմանն ուղղված մնացած հարցերը:

Օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է Ընկերությունում վերստուգող հանձնաժողով (վերստուգող) ընտրված լինելու դեպքում:

Այս հոդվածից բխում է, որ տարեկան ժողովի ընթացքում տարեկան հաշվետվության և հաշվեկշռի հստատման համար անհրաժեշտ է, որ առկա լինի վերստուգողի (հանձնաժողովի) եզրակացությունը, սակայն օրենսդիրը բացառություն է արել. մասնավորապես՝ տարեկան հաշվեկշռի հաստատումը կարող է առանց վերստուգողի եզրակացության լինել, եթե վերստուգող մարմինը

[1] Օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61.2-րդ հոդվածով սահմանվում է, որ խորհուրդը պարտավոր է հրավիրել արտահերթ ժողով, եթե խորհրդին վերապահված գույքի վաճառքի որոշումը չկայացվի, կամ օրինակ՝ ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով կանոնադրական կապիտալի նվազագույն չափ սահմանված լինելու դեպքում ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է սահմանված չափից, ապա Ընկերության գործադիր մարմինը պարտավոր է խորհրդին ներկայացնել արտահերթ ժողովի գումարման պահանջ:

ընտրված չէ, հետևաբար տարեկան հաշվետվությունը չի կարող հաստատվել նույնիսկ այն դեպքում, երբ ընկերությունը վերստուգող մարմին չունի:

Այսպիսով, կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ սահմանված ժամկետում ընկերությունը ընդհանուր ժողով չի հրավիրել, և արտահերթ ժողովը կարող է հրավիրվել միայն պատադիր քննարկման ենթակա որոշումների հաստատման համար, որոնց շարքին է դասվում նաև տարեկան հաշվետվության և հաշվեկշռի հաստատումը, իսկ ընկերության վերստուգող մարմնի լիազորությունները դադարել են:

Նման պայմաններում արտահերթ ժողովի կայացման համար տարեկան հաշվեկշռի հաստատվաված լինելը վերստուգող մարմնի կողմից պարտադիր չէ, քանի դեռ չի ընտրվել վերստուգող մարմին, ապա տարեկան հաշվետվության հաստատված չլինելու պայմաններում արտահերթ ժողովի ընթացքում հնարավոր չէ հաստատել այն, այնուհետև անցնել այլ հարցերի քննարկմանը, որոնք որ անհրաժեշտ են ընկերության բնականոն գործունեությունը ապահովելու համար:

Վերոշորադրյալից կարող ենք արձանագրել, որ անհրաժեշտ է Օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ կերպ.

«Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվետվության և հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է Ընկերությունում վերստուգող հանձնաժողով (վերստուգող) ընտրված լինելու դեպքում»:

Եթե օրենսդիրը Օրենքի 93-րդ հոդվածը նման կերպ փոփոխության ենթարկի, ապա, կարծում ենք, պրակտիկայում այլևս նման խնդիրների առաջացումը կբացառվի:

Հաջորդ կարևոր խնդիրը այն է, թե տարեկան ժողովը չկայանալու և վերստուգող ընտրված չլինելու դեպքում ընկերությունը ինչպե՞ս կարող է նշանակել վերստուգող (հանձնաժողով) մարմին:

Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կատարվում են ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը ժողովին վերապահված լինելու դեպքում քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Նշված իրավանորմից բխում է, որ միայն բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի ընթացքում են հնարավոր վերստուգողի (հանձնաժողովի անդամների) ընտրությունը և նրա (նրանց) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, իսկ տարեկան ընդհանուր ժողովի չկայացման դեպքում սահմանված ժամկետում կարող է հրավիրվել արտահերթ ժողով, որի ընթացքում կարող է քննարկման առարկա դառնալ ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցը, միայն եթե վերջինս որոշում է ըն-

դունել ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար բաց Ընկերությունում ընտրվում է, իսկ փակ Ընկերությունում կարող է ընտրվել Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող)(…)»:

Օրենքի 91-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերստուգող հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով(…):

Վճռաբեկ դատարանը իր 2021 թվականի հոկտեմբերի 22-ին թիվ ԵԴ/0392/02/20 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«…Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ աշխատանքային հարաբերությունների ծագման նախապայմանն աշխատողի ընտրված լինելն է տվյալ աշխատատեղում, որն օրենքով սահմանափակված է հստակ ժամանակահատվածով, այդ ժամանակահատվածը լրանալու փաստի ուժով դադարում է գոյության ունենալ աշխատանքային հարաբերությունների ծագման նախադրյալը, և արդյունքում դադարում է նաև կողմերի միջև գոյություն ունեցող աշխատանքային հարաբերությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անկախ պայմանագրի լուծման վերաբերյալ գործատուի կողմից ծանուցման պահանջը պահպանված լինելուց կամ աշխատանքային հարաբերությունները փաստացի շարունակվելու հանգամանքից, հատուկ նորմի ուժով՝ ժամկետն ավարտվելու հիմքով վերստուգողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը համարվում է դադարած:…»:

Վերոշարադրյալ իրավանորմերի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը կարող է ընտրել վերստուգող մարմնին և իր որոշմամբ դադարեցնել վերջինիս լիազորությունները: Սահմանված ժամկետի ավարտից հետո, երբ վերստուգող մարմնի լիազորությունները դադարում են, անհրաժեշտ է ընդհանուր տարեկան ժողովի ընթացքում ընտրել վերստուգող մարմնին (հանձնաժողովի անդամներին), քանի որ ընկերության հետ կնքված պայմանագիրը ինքնաբերաբար չի երկարացվում, ինչպես որ կերկարացվեր ընկերության այլ աշխատակցի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Այսպիսով, պրակտիկայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ վերստուգող մարմնի հետ կնքված պայմանագրի ժամկետը ավարտվելու ուժով դադարել են վերստուգող մարմնի լիազորությունները, և անհրաժեշտ է ընտրել վերստուգող մարմնին՝ հաստատելու տարեկան հաշվետվությունը, հաշվեկշիռը և այլ լիազորությունները, սակայն տարեկան ժողովը սահմանված ժամկետում չի կայացել, և այժմ կարող է հրավիրվել արտահերթ ժողով՝ օրենսդրի կողմից հստակ սահմանված որոշումների ընդունման համար: Եթե մեր կողմից ներկայացված առաջարկով հնարավոր կլինի լուծել արտահերթ ժողովի կայացման հարցը առանց ընկերության վերստուգող մարմնի ընտրված լինելու, ապա Օրենքով հնարավորություն չի տրվում նշանակել արտահերթ ժողով և ընտրել վերստուգող մարմնին, եթե վերստուգող մարմնի լիազորությունները դադարել են պայմանագրի ժամկետի ավարտման հիմքով, և կարող է առաջանալ այնպիսի մի իրավիճակ, որ հնարավորություն չլինի արտահերթ ժողովի միջոցով ընտրել վերստուգող:

Սույն խնդրի լուծման համար, կարծում ենք, անհրաժեշտ է Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված սահմանափակումը՝ արտահերթ ժողովի ընթացքում վերստուգող մարմնի ընտրության մասով, վերացնել և համապատասխան կետը շարադրել հետևյալ կերպ.

«11) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը ժողովին վերապահված լինելու դեպքում քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին, կամ սահմանված ժամկետում տեղի չի ունեցել տարեկան ժողովը, կամ լրացել է Վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի) լիազորությունների ժամկետը»:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ АКЦИОНЕРНЫМИ ОБЩЕСТВАМИ

Мартин Хачикян
Юрист ООО “Би Ел Си”

Предметом обсуждения в статье являются практические проблемы, возникшие в результате систематического изучения и анализа обычной деятельности общего собрания, высшего органа корпоративного управления в Республике Армения, а также предложены варианты решения существующих проблем.

В частности, представлены практические проблемы, которые возникающие в связи с непроведением годовых собраний в указанный срок, и обоснована необходимость внесения законодательных изменений, направленных на их решение.

SOME ISSUES OF GOVERNANCE OF JOINT STOCK COMPANIES

Martin Khachikyan
Associate at BLC Group LLC

The subject of discussion in the article is the practical tasks identified as a result of a systematic study and analysis of the ordinary activities of the general meeting - the highest body of corporate governance in the Republic of Armenia, as well as proposals aimed at solving existing problems.

In particular, the practical problems that arose as a result of the failure to hold the annual meeting within the specified period were presented, and the need to introduce legislative changes aimed at solving them was justified.

Բանալի բառեր - *կորպորատիվ կառավարում, կառավարման մոդելներ, ընդհանուր ժողով, ժողովի իրավասություններ, արտահերթ ժողով, ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը)*
Ключевые слова: *корпоративное управление, общее собрание, полномочия общего собрания, внеочередное собрание, ревизионная комиссия*
Key words: *corporate governance, general meeting, powers of the general meeting, special meeting, audit committee*